ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 106 - Ա
04 հուլիսի 2013 թ

ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Սևան համայնքի ղեկավարին՝

   1) Ապահովել <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի պահանջների կատարումը:
   2) <<ՀՀ աշխատանքային օրենսգրքի>> 192-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան, թույլ չտալ աշխատավարձի վճարման ուշացացման դեպքեր:
   3) Ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրել ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ սահմանված կարգի 4.2-4.4 կետերին համապատասխան:
   4) Ղեկավարվելով ,,տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանու նիստերը հրավիրվել ոչ ուշ քան երկու ամիսը մեկ:
   5) Ղեկավարվելով ,,տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1^1 կետի պահանջով՝ քաղաքապետի կողմից ընդունվող իրավական անհատական ակտերը երկօրյա ժամկետում տրամադրել համայնքի ավագանու անդամներին և փակցնել բնակչության համար տեսանելի վայրերում:

6) Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողություն իրականացնել ,,Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքի 17 հոդվածի 1-ին կետերի պահանջներին համապատասխան:
7) Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ պարբերաբար մարզպետարան ներկայացնել հաշվետվություն ,,Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան:
8) Նոր իրավական ակտ ընդունելուց առաջ գործող իրավական ակտը պետք է ուժը կորցրած ճանաչել:
9) Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2011թթ. հաշվառման մատյանները:

2. Սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 31-ը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ